

սին: Ուխտաւոր – ուղեգիրներէն Թէոդոս սարկաւազ (530) առաջին անգամ կը յիշատակէ Ս. Գէորգին դերեզմանը Լիւզի մէջ:

Ինչպէս որ Լիւզի բարգաւաճումը Օնոյի անկումին պատճառ եղաւ, նոյնպէս ալ Ռամլէն՝ 637 ի աւարական արշաւանքէն յետոյ պատճառ դարձաւ Լիւզի անկումին:

1099 ին Խաչակիրները այս քաղաքը գտան անպաշտպան. տեղացիները այրեցին եկեղեցին որպէսզի Ֆրանկները անոր գերաններով պատերազմական մեքենաներ չի շինեն: Խաչակիրները ԺԲ. դարու կիսուն նոր եկեղեցի մը շինեցին հոն, առաջինին հիւսիսային արևելքը: Նորաշէն Ս. Գէորգ եկեղեցին 1191 ին քանդուած է Սալաէտտինի հրամանաւ (Bar. gd. էջ 31–33):

Հոս կը դնենք Ս. Գէորգի աւանդութեան մասին ուսումնասիրուած գրութիւն մը. «Ս. Գէորգ ազնուական ծնողաց զաւակ էր, և Դիոկղետիանոսի թագաւորութեան ժամանակ Տրիբունի պատիւին արժանացած էր. իր քաջասրտութիւնը կայսեր ուշադրութեան առարկայ եղաւ. և այդ կերպով կայսեր հետ ծանօթացաւ: Իր հայրը Աւետարանի պաշտպանութեան համար կորսնցուց իր կեանքը. եւ Ս. Գէորգ տուն մը փնտռեց Պաղեստինի մէջ իր մօրը հետ, որ տիրացաւ և Ս. Գէորգ ժառանգեց զայն մօրը մեռնելէն վերջ: Դիոկղետիանոսի կողմէ քրիստոնեաներու անողորմ հալածանքը գրգռեց բարկութիւնը սուրբին որուն հայրը նահատակուած էր հաւատքի համար, և իր աներկիւղ բողոքը այնչափ բարկացուց կայսրը որ ճգմել տուաւ անոր բազուկները ջաղացքի քարի մը տակ և յետոյ գլխատեց: Այս կերպով Պաղեստինի Լիւզ քա-